# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար արտադրական հատուկ հագուստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար ԳՊ/ԳՍՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Տիգրան Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետ

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/25» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի նոյեմբերի 15-ին, ժամը 10:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Արտադրական հատուկ հագուստ | 2 160 000 |
| 2. | Արտադրական հատուկ հագուստ | 3 096 000 |
| 3. | Արտադրական հատուկ հագուստ | 216 000 |
| 4. | Արտադրական հատուկ հագուստ /խալաթ/ | 512 999,56 |

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլ. փոստի հասցեն |
|---|---|
| «Կոտայքկոշ» ԲԲԸ | kotayk-kosh@mail.ru |
| «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | elaam@bk.ru |

Ներկայացված հայտերը Հանձնաժողովի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**5. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Կոտայքկոշ» ԲԲԸ-ի, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 «Կոտայքկոշ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

6.2 «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ 3-րդ չափաբաժնի (Ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2) ընդհանուր գինը սյունակում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա հիմք ընդունվող տառերով գրված գումարի դեպքում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում նշված գումարների հանրագումարը սխալ է):

Հանձնաժողովը որոշեց «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար, իսկ 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը, 40-րդ կետի 4-րդ ենթակետը, 41-րդ կետը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

7. Մասնակիցների առաջարկած գներն են

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Կոտայքկոշ» ԲԲԸ | | | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Արտադրական հատուկ հագուստ | | | | 1 744 950 | 348 990 | 2 093 940 |
| 2 | Արտադրական հատուկ հագուստ | | | | 2 501 095 | 500 219 | 3 001 314 |
| 3 | Արտադրական հատուկ հագուստ | | | | 177 495 | 35 499 | 212 994 |
| 4 | Արտադրական հատուկ հագուստ /խալաթ/ | 315 520 | 63 104 | 378 624 | 401 070 | 80 214 | 481 284 |

**8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին,

-4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոտայքկոշ» ԲԲԸ-ին,

*- 4-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ին,*
*- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված այլ հայտեր չկան:*

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով`

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը.

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. հոկտեմբերի 21-ը ներառյալ, ներկայացնել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0.*

**Հանձնաժողովը որոշեց.**

-ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին).

-հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/25» ծածկագրով ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

**-ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. հոկտեմբերի 23-ին, ժամը 11:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0.*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝

Տիգրան Ստեփանյան

Արմինե Ալիխանյան

Էդգար Մելքոնյան

Կարեն Մելքոնյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/25»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար արտադրական հատուկ հագուստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/25» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| **Չափաբաժնի համար** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 3. | Արտադրական հատուկ հագուստ | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | Հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը, 40-րդ կետի 4-րդ ենթակետը, 41-րդ կետը: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/25» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրոնային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**: